ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ << ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>ՊՈԱԿ

---


04407665

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

Արմավիր մարզ

գ. Նալբանդյան 3պղտ,42ենք

հեռ. 077-11-66-22

nalbandyandproc@mail.ru


Թիվ – 271

<< 14>> Սեպտեմբերի 2023թ.

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետ

Է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարոն Հովհաննիսյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում առկա է ուսուցչի թափուր տեղ:

Մաթեմատիկա առարկա - 12 ժամ

Առդիր՝ 1 էջ:

Տնօրեն S. Գևորգյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Նալբանդյանի Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ՝ մաթեմատիկա առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

- Դիմում / ձև 1/, 1լուսանկար 3×4 չափսի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ
- << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- Ինքնակենսագրություն / ձև 5 /
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023թվականի սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր $9^{00}$ –ից մինչև $15^{00}$, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը $14^{00}$-ին, ՀՀ Արմավիրի մարզի << Նալբանդյանի Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան միջն. դպրոց >> ՊՈԱԿ-ում: Հասցեն ՀՀ Արմավիրի մարզ գ.Նալբանդյան 3պղտ, 4շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 077-11-66-22 հեռախոսահամարով: